ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԹՂԹԵՐ ԿԱՐՆՈ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՏԻԳՐԱՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ (Լոնդոն)

Լոնդոնի Անգլիո արտաքին գործերու արխիվներու կեդրոնը պրպտումներ կկատարեինք, երբ 1882 թ. արխիվներու փաթեթին մեջ հանդիպեցանք մի քանի էջնոց վավերաթուղթերու, որոնք տեղեկություններ կպարունակեն Կարնո «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին։

Այդ գաղտնի ընկերությունը, ինչպես հայտնի է, նպատակ ուներ զինված պայքար մղել օսմանյան բռնապետության դեմ և ազատագրել արևմտահայությունը նրա ստրկական ծանր լուծեն[1]։ Արխիվի վավերաթուղթերը կպատկանեն Էրզրումի անգլիական փոխհյուպատոս հազարապետ Ուիլյամ Էվերեթին։ Իր քաղած տեղեկությունները Էվերեթը երկու նամակով հղած է Կ. Պոլսո Անգլիո դեսպան կոմս Դուֆերինին, որը իր կարգին նամակով մը փոխանցած էր Լոնդոն, արտաքին գործերու նախարար կոմս Գրանվիլին։ Վավերաթուղթերու մեջ կա նաև երկու օրինակ կազմակերպության երդմնագրերեն, որոնք կտրվեին «Պաշտպան հայրենյացին» անդամակցողներուն (անդամ և զինվորներուն)։ Երդմնագրերը թարգմանված են անգլերենի, անգլերեն տառերով գրված է անոնց հայերենը։ Այս վավերաթուղթերը նորություն լինելով օգտակար են արդեն իսկ ծանոթ պատմական փաստերը լուսաբանելու դիտանկյունեն։

1882 թ. հունվարի 3-ի իր առաջին նամակում Ու. Էվերեթը գրում էր դեսպան Դուֆերինին. «Պատիվ ունիմ ձեզի ներփակ ղրկելու օրինակ մը. թարգմանությունը և նմանագրությունը այն թուղթին («Երդմնագիր»—Տ. Տ.), որ իմ համոզումով լայնորեն տարածված է Էրզրումի և, հակառակ խնծի արված տեղեկությանց, ամբողջ նահանգի հայերուն մեջ։ Բնագիր օրինակը ձեռքս անցավ միայն քանի մը վայրկյանի համար, շուտով վրայեն գծեցի (թրեսինկ) և անոր թարգմանությունն ու նմանագրությունը կղրկեմ ձեզի։ Ասիկա մեկն էր բողոքական համայնքին պատկանող երիտասարդի մը մոտ գտնվող երկու թուղթերեն։ Դիպվածով կորսնցուցած էր զանոնք և վերադարձվելե առաջ այս մեկը հանձնվեցավ իմ ուշադրության։ Չկրցա տեսնել երկրորդը, որ լեցված էր, այն բացառությամբ, որ ուխտյալը չէր ստորագրած իր անունը... Կաթոլիկներուն արտոնված չէ անդամակցիլ («Պաշտպան հայրենյացին»—Տ. Տ.), բայց քանի մը բողոքականներ, նոր տրված հրահանգի հիման վրա, վերջերս սկսած են մուտք գործել անոր շարքերը։

Անկեղծորեն Ձերդ՝
Ուիլյամ Էվերեթ»[2]։

---

1 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ. Երևան, 1955, էջ 182—199։ Ռ. Փ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965։

2 Անգլիո Արտաքին գործերու նախարարության Արխիվներու կեդրոն, փաթեթ № CAB 37/38, 024216։ Համաձայն այս փաստաթուղթին, հայ բողոքականները և կաթոլիկները սկզբում չէին ընդունվեր «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մեջ, իսկ երբ այդ արգելքը կվերցվի և անոր շարքերը մուտք կգործեն բողոքական հայ երիտասարդներ, Անգլիո գաղտնի սպասարկության ձեռքը կհասնին «Պ. Հ.»-ի անդամներուն տրված երդմնագիրները։

Սույն հաղորդման մեջ մեր նպատակն է քննարկել հետևյալ հարցերը.
ա.—«Պաշտպան հայրենյացի» հիմնադրության թվականը,
բ.—«Պաշտպան հայրենյացի» անդամներու թիվը,
գ.—«Պաշտպան հայրենյացի» հայտնաբերման հետ կապված քանի մը հարցեր։

Նախքան այդ հարցերի քննությանն անցնելը հարկ կհամարենք նշել, որ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը հանդիսացավ արևմտահայության ազգային ազատագրական շարժման նախապատմության առենեն նշանավոր, լավ կազմակերպված և գաղտնի կազմակերպություններեն մեկը։ Անոր հրամանն էր՝ «Գիտցիր որ կփրկվիս»։ Հայ ժողովուրդի ազատագրության համար ան որպես միջոց մը կտեսներ զինել հայ ժողովուրդը, զենքով պայքարիլ օսմանյան բարբարոս և հետամնաց պետության դեմ, ազատել հայ ժողովուրդը ստրկության ծանր լուծեն, անդուլ պայքարիլ մինչև որ հայ ժողովուրդը տիրանա իր ազատության և Հայաստանը դառնա ինքնավար պետություն մը։ 1882-ին ձերբակալվեցան «Պաշտպան հայրենյացի» 70 անդամներ։ Անոնց շարքին կային 3 մտավորականներ, 3 վաճառականներ, 1 նկարիչ, 20 հողագործ, 13 կոշկակար և 6 դերձակ, իսկ մնացյալը դարրին, հյուսն, ջաղացպան և ջորեպան էին։ Ձերբակալյալ այդ 70 հոգիեն 40ը 1883ի ապրիլ-հունիսին կդատապարտվեին 5—15 տարվան բանտարկության, իսկ մյուսները ազատ կարձակվեին։

Կազմակերպությունը ուներ զինվորական խումբեր, որոնք կղեկավարվեին տասնապետներով, հարյուրապետներով և հազարապետներով, անոնք ունեին նաև ընդհանուր հրամանատար մը՝ մարաջախտ, մուշիր։ Գաղտնապահությունը կհանդիսանար կազմակերպության գերագույն օրենքը, նույնպես և կարգապահությունը։ Բոլոր անդամները կարձանագրվեին իբրև հայ ժողովուրդի զինյալներ և կկատարեին իրենց երդումը, որ գրված կըլլար մասնավոր պատրաստված թղթիկներու վրա։ Կարժե կարդալ այդ երդմնագիրները, որոնցմե երկու օրինակ պահված է Անգլիո արխիվներու կեդրոնը։

Առաջին երդմնագիր

Զ . . . . . (օրք, միայն Զ տառը գրված է—Տ. Տ.)։
ԿԵՐԴՆՈՒՄ ԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲ ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՈՒԻՍ ՎՐԱՅ, ՈՐ ԱԶԳԻՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՅՆ ՋԱՆՈՒՔ ԱՇԽԱՏԻ�լ ԵՒ Ի ՊԱՀԱՆՋԵԱԼ ՀԱՐԿԻՆ ԻՄ ԱՆՁՍ ՁԽՆԱՅԵԼ, ԹԷ ՍՈՅՆ ՈՒԽՏԻՍ ՊԱՐՏԱԶԱՆՑ ԼԻՆԵՄ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԺՈՂՈՎՆ ԻՄ ԿԵԱՆՔՍ ԲԱՌՆԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԵՆԱՅ։
188 . . . ԱՐՀԵՍՏ . . . . . ԹԱՂ . . . . . ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ . . . . .
ՇՈՒԿԱՅ . . . . . ԹՒՒ . . . . . «ԵՐԴՄՆԱՅՈՒՅԻՉ» . . . .

Երկրորդ երդմնագիր

Երդմնագիրի վրա գծված է զինանշան. վահանի վրա—արծիվ՝ մագիլներով բռնած գառնուկ մը, խոյի գլուխ և թևավոր վիշապ, կլոր շրջանակի մեջ՝ Արարատ լեռը, վրան Նոյյան տապանը։

«ԳԻՏՑԻՐ ՈՐ ԿԸ ՓՐԿՈՒԻՍ»

ՅԱՆՁՆՈՒՐԱՅ ԵՂԲԱՅՐ,

ՁԵՐ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՄԲ . . . . . ԹՈՒԱԿԱՆԱՒ ԵՐԴՄՆԱԳԻՐԴ ԱՌ ՄԵՋ ՀԱՍԱՒ ԵՒ ՁՔԵԶ ՏԱՍՆԱՊԵՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՔԵՎ ՏՈՒԻՆՔ։ ԵՐԴՄԱՆԴ ՀԱՄԵՄԱՏ ԺՈՂՈՎԻՍ ԿՈՂՄԷ ՏԱՍՆԱՊԵՏԻ ՄԻՋՈՑԱՒ ՔԱՂԱՔ ՀՐԱՀԱՆԳԻՆ ԳՈՐԵԱԴՐԻԼԼՆ ՀՈԳ ԵՒ ՁԱՆՔ ՁՊԻՏԻ ԽՆԱՅԵՍ, ԳԻՏՑԻՐ ՈՐ

ՔՈՒ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ՔԵԶ ՊԱՏԻՒ ՈՒ ՊԱՏԻԺ ԿԸ ՏՆՕՐԻՆՈՒԻ։ ՆԱԵՒ ԿԱԶԴԱՐԱՐԵՆՔ ՁՔԵԶ ՑՕԳՈՒՏ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԻՆՉ ՈՐ ԿԸ ԼՍԵՍ ՆՈՅՆԸ ԿԸ ՀԱՂՈՐԴԵՍ ՏԱՍՆԱՊԵՏԻԴ, ՈՐ ՆԱ ԱՌՆ ՄԵԶ ՏԵՂԵԿԱՑՆԷ։

Պ. Հ.

ԳՈՐԾԱԴԻՐ ՈՒԽՏԱԽՈՒՄԲ

ԲՈՒԽ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 434 .....

Ա. «Պաշտպան հայրենյացի» հիմնադրության թվականը. «Պաշտպան հայրենյացի» հիմնադրության թվականի շուրջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ։ Հիշենք միայն քանի մը օրինակներ։ Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը գրում է հետևյալը. «Էրզրումի Պաշտպան հայրենյաց զաղտնի կազմակերպությունը երկար կյանք չունեցավ։ Նա, ինչպես տեսանք, հիմնվեց 1881 թ. վերջերին, իսկ հայտնաբերվեց 1882 թ. նոյեմբերին»[3]։ Ռ. Փ. Հովհաննիսյանի գրքում ասված է. «Քիչ ավելի ուշ, 1881-ի մայիսին, երիզագործ խաչատուր Կերեկցյանի ղեկավարությամբ հիմնադրվեց «Պաշտպան հայրենյացը»[4]։ Իսկ Միքայել Վարանդյանը գրում է. «Նախահեղափոխական շրջանի ամենեն նշանավոր դավադրական խմբակցությունը կազմված էր Էրզրումի մեջ 80-ական թվականներու սկիզբները»[5]։

Վերադառնանք անգլիական վավերաթղթերուն և Էվերեթի տեսակետին։ Հիմնվելով «Պաշտպան հայրենյացի» ղույգ երդմնագրերու թվականին վրա, ան կգրե հետևյալը. «Ամենեն հետաքրքրական մասն է թվականը, որ գրված է միայն երեք թիվերով... որ ամբողջացված էր բնագրին վրա։ Ընդօրինակողի զրությունը և այսպես՝ թվականը 4374 էր։ Մենք այժմ 4375-ի մեջ ենք (հունվար 1882—օգոստոս 1882-ին—պիտի ըլլա 4376, որովհետև հայկական հին տոմարին համաձայն օգոստոս կըլլա Նավասարդ ամիս—հայոց Նոր տարին—Տ. Տ.)։ Գալով առաջին երդմնագրի թվականին, անիկա գրված էր փոկշական տարեթիվով։ Ինչպես որ երդման թուղթը, իր իսկական օրինակով ցույց կուտար 30 նոյեմբեր 1880 և օգոստոս 1881-ի միջև։ Այս կետը կարևոր է նոթագրել, որովհետև շարժումը նոր չէ։ Դժգոհությունները հետևանք են բարենորոգումներու ուշացման»[6]։

Նկատի ունենալով «Պաշտպան հայրենյացի» հիմնադրության թվականին շուրջ տրված վերոհիշյալ տեսակետները, հատակապես «շարժումը նոր չէ» հաստատումը կատարող Էվերեթի նշումը, կարելի է ըսել, որ կազմակերպությունը հիմնված ըլլալու է Պերլինի վեհաժողովեն անմիջապես ետք, 1878-ի վերջերը և կամ ալ 1879-ի սկիզբները։ Ուստի այս տեսակետը հաստատելու համար դարձյալ դիմենք Ռ. Փ. Հովհաննիսյանի գիրքին մեջ հիշատակված մեկ ուրիշ վկայության. «Դեռ 1878-ի նոյեմբերին Կ. Պոլսեն Հ. Նշկյանի գրած սյատասխան նամակում, Մ. Խրիմյան ոգեշնչում էր նրան. «Քաջալերե և զինե ձեզ նման հայրենակիցներդ, լույս և երկաթ միասին լծորդելով

[3] Մ. Գ. Ներսիսյան. Նշվ. աշխ., էջ 194։

[4] Ռ. Փ. Հովհաննիսյան. Նշվ. աշխ., էջ 286—87։

[5] Մ. Վարանդյան. Հ. Հ. Դաշնակցության պատմություն. հ. Ա, էջ 32։

[6] Անգլիո արտաքին գործերու նախարարության արխիվներու կեդրոն, փաթեթ № CAB 27/7։

վազեցեք դեպի ապագան»[7]։ Ինչպես գիտենք, Հ. Ծշկյանը խորհրդատու անդամներեն մեկն էր «Պաշտպան հայրենյացի» և հասկանալի է, թե կազմակերպությունը իր ծրագրին մասին ինչու համար տեղյակ պահած էր Հայրիկը—չէ՞ որ Խրիմյանն էր, որ Պերլինի վեհաժողովեն Ետքը կշեփորեր «երկաթե շերեփի» գաղափարաբանությունը»։

Բ. «Պաշտպան հայրենյացի» անդամներու թիվը. «Պաշտպան հայրենյացի» անդամներուն թիվը ևս ենթակա է տարբեր գնահատումներու։ Ռուսական ցարական արխիվներու համաձայն, այդ թիվը եղած է «քանի մը հարյուր»[8]։ Ռ. Փ. Հովհաննիսյանի կարծիքով, սակայն, այդ թիվը շատ ավելի է. «1882-ի նոյեմբերին կազմակերպության անդամներին թիվը արդեն հազարների է հասնում»[9]։ Այսուհանդերձ, նույն գրքին մեջ, հաշվական սխալով մը, Հովհաննիսյան կհանգի ուրիշ թիվի ենթադրության, երբ կգրե. «Ձերբակալություններու ժամանակ Տեր Պողոսյանի մոտ գտնված անդամատոմսը կրել է 4374 համարը և մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ կազմակերպության անդամներու թիվը հասել է շուրջ 5000-ի»[10]։ Ընթերցողին ծանոթ է արդեն, որ «Պաշտպան հայրենյացի» երկրորդ երդմնագիրին թվականը ինչ-որ տարբերով է և ոչ մեկ կապ ունի կազմակերպության անդամներուն թիվին հետ։

Առայժմ փաստացի ոչ մեկ վավերաթուղթ կա, որուն միջոցով կարելի պիտի ըլլա ճշտորեն հաստատել, թե քանի՞ անդամ ուներ «Պաշտպան հայրենյացը»։ Սակայն հայկական, ռուսական և անգլիական արխիվային տեղեկությանց համաձայն իրողություն է, որ կազմակերպությունը կգործեր Կարին քաղաքին և անոր շրջակա գյուղերուն մեջ։ «Պաշտպան հայրենյացի» անդամներ կային նաև Կ. Պոլիս և Արևելյան Հայաստանի մեջ, իսկ հետագային անոր միացավ նաև Վանի «Սև խաչ» միությունը»։ Այս հիման վրա կարելի է ենթադրել, որ կազմակերպության անդամներուն և համակիրներուն թիվը պետք է հասած ըլլա 1000-ի։

Գ. «Պաշտպան հայրենյացի» հայտնաբերման ճարը. Ո՞վ եղավ պատճառ-դավաճանը «Պաշտպան հայրենյացի» հայտնաբերման։ Այս գծով ևս, ժամանակի ընթացքին, արտահայտված են զանազան տեսակետներ և կարծիքներ։ Ժամանակին հարցին ծանոթ Կարնո առաջնորդ (ապագային՝ Կ. Պոլսո պատրիարք) Մ. Օրմանյան տված է հետևյալ տեղեկությունը. «Եվ ահա Կարինի մեջ տեղի ունեցած պատմական դիպված մը իբր առաջին հեղափոխական շարժում խոսվեցավ։ Մելքիսեդեկ քահանա Տեր-Մելքիսեդեկյան ապաշխարհութեան համար Կարմիր վանք գտնված ատեն հիվանդացավ, և խնամվելու համար իր տունը դառնալ արտոնվեցավ։ Քահանային անձնապես հակառակորդ քանի մը անձինք անոր տանը առջև բուռն ցույցերու մղվեցան, և մոտակա պահականոցին ոստիկանությունեն ձերբակալվեցան 1882 նոյեմբեր 22-ին։ Վրանին խուզարկված ատեն զինակիր ընկերության մը մառնակից ըլլալին երևան եկավ, և հարցաքննություններով և հետախուզու-

7 Ռ. Փ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 284։
8 Մ. Գ. Ներսիսյան. նշվ. աշխ., էջ 183։
9 Ռ. Փ. Հովհաննիսյան. նշվ. աշխ., էջ 288։
10 Նույն տեղում, էջ 297։

թյուններով 72 հոգի ձերբակալվեցան ամենն ալ ստորին դասակարգե երկաթագործ կամ հողագործ երիտասարդներ»[11]։ Իսկ օսմանյան դատական պաշտոնական տեղեկությանց համաձայն՝ «Մի արհեստավոր, ինչ-որ հարցի կապակցությամբ, դատական գործ է բացում երեք ուրիշ արհեստավորների դեմ։ Դատաքննության ժամանակ մեղադրվող արհեստավորներից մեկի մոտ գտնվում են թղթեր, որոնք և բացում են գաղտնիքը»[12]։ Կարնո ռուսական հյուպատոս Դեննետի փոխանցած տեղեկություններով, «գաղտնի կազմակերպության գոյության մասին ոստիկանությանը հայտնել է քահանա Տեր Մկրտիչ Սկեվրանի տղան, անձնական վրեժի դրդումով»[13]։ Իսկ ինչ կլիերաբերի անգլիական արխիվներուն մեջ պահված տեղեկությանց, անգլիական գաղտնի ոստիկանությունը «Պաշտպան հայրենյաց»-ին ծանոթ էր արդեն Հունվար 1882-ին, այսինքն՝ անոր հայտնաբերման թվականեն շուրջ 11 ամիս առաջ, ինչպես այդ կլսենք Էվերեթի՝ վերևում բերված նամակից[14]։

Արդեն նշել ենք, որ Էվերեթեն ստացած տեղեկությունները Կ. Պոլսո Անգլիս գեսպան կոմս Դուֆերի կփոխանցե Լենտոն, արտաքին գործերու նախարար կոմս Գրանվիլի։ Գրանցից առաջինին կցված է հետևյալ նամակը. «Տեր իմ, պատիվ ունիմ փոխանցելու Ձերդ տերության ներփակյալ օրինակները պաշտոնագրերու, որոնք ստացած եմ հազարապետ Էվերեթեն, որուն հավաստած տեղեկությանց համաձայն Էրզրումի մեջ հայկական ապստամբություն մը հավանական է և այդ գծով որոշ պատրաստություններ կանանցին։ Շնորհակալություններս հայտնեցի Էվերեթին այս հետաքրքիր հաղորդակցության համար։ Խնդրեցի իրմե որ շարունակե տեղեկություն տալ որևէ նորության մասին, որ կվերաբերի նոյն նյութին։ Ավելին, տեղեկացուցի իրեն, որ դեմ տեսներ կարիքը այս գծով որևէ տեղեկություն փոխանցելու տեղական իշխանությանց»[15]։

Էվերեթի երկրորդ տեղեկագրումը կկրե 20 Հունվար 1882 թվականը և կըսե՝ «Չէի ակնկալեր, որ պիտի կարենայի այսքան կանուխ ձեզի ղրկել հավելյալ տեղեկություններ հայկական ազգային շարժումներու մասին։ Բայց ահա պատիվը ունիմ ներփակ ձեզի ղրկելու թարգմանությունը և նմանագրությունը մեկ ուրիշ թուղթի (դարձյալ երդմնագիր—Տ. Տ.), որ առաքված է գաղտնի կոմիտեին կողմե («Պաշտպան հայրենյաց»—Տ. Տ.) և ավելի կպարզաբանե զինվորագրության ձևը, միաժամանակ հաստատելով, որ շարժումը երկար ժամանակե ի վեր աշխատանքի վրա է... Ինչպես որ պիտի նկատեք, այս թուղթը շատ ավելի կանոնավոր աշխատանք կենթադրե քան առաջինը՝ տպագրությունը, զարդարանքը և հոգատարությունը ավելի կանոնավոր են։ Այսքան լավորակ ոչինչ կարելի է գտնել Էրզրումի մեջ։ Ակներև է, որ այս թուղթը ներածված է։ Որոշ տարաձայնություններե և գրելու ձևեն մեկնելով

11 Մ. Օրմանյան. Ազգապատում. Պեյրութ, 1961, էջ 4407։

12 Մ. Գ. Ներսիսյան. Նշվ. աշխ., էջ 195։

13 Նույն տեղում։

14 Անգլիս արտաքին գործերու նախարարության արխիվներու կեդրոն, փաթեթ № CAB 27/7։

15 Նույն տեղում։

կհաստատեմ, որ այս թուղթը եկած է Ռուսահայաստանեն և վստահ եմ, որ զույգ թուղթերուն նմանությունը և գծագրությունը արդյունք են միևնույն արվեստագետի աշխատանքին»[16]։ Վերջավորության ան մտահոգված կգրե. «Որքան երկար մնամ այս երկիրը, բնականաբար ներկայությունս կասկածելի կդառնա։ Նույնիսկ կա այն հավանականությունը, որ այդ թուղթերը դիտմամբ իմ ձեռս ինկան, հուսալով որ ես զանոնք պիտի ղրկեմ Ձերդ վսեմության, որպեսզի խեթան ծառային բարենորոգումներու հարցին հետապնդումին»[17]։

Ինչպես որ կնկատե ընթերցողը, անգլիական գաղտնի սպասարկությունը մանրամասնորեն տեղյակ էր և ուշի-ուշով կհետևեր հայերու ազգային աղատագրական շարժումին և ըմբոստացումին։

Արդյոք ի՞նչ էր պատճառը, որ անգլիացիք սպասեցին տասնամեկ ամիս... մինչև շարժումին հայտնաբերումը։ Արդյոք ո՞վ էր մատնողը, դավաճան հա՞յ մը, հայ քահանա՞ մը, անոր տղա՞ն, բողոքական կամ կաթողիկե հա՞յ մը, թե՞ հայտնաբերումը գործն էր Անգլիո գաղտնի սպասարկության...

Բոլոր պարագաներուն մեջ «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը կազմալուծվեցավ 1882-ի Նոյեմբեր 22-են ետք, այդ օրը խեղդվեցավ հայոց արդար բողոքին ձայնը, որ մեր օրերեն 110 տարի առաջ ուժգնորեն հնչեց Էրզրումի հայոց լեռներեն ...

---

16 Նույն տեղում։ Ինչպես որ ընթերցողը նկատեց, արդեն էվերեթ մանրամասնորեն քննած է «Պ. Հ.»-ի երդմնագիրի յուրաքանչյուր կետը՝ թուղթը, տպագրության որակը, զարդարանքը, և գիրերը։ Նույնիսկ հաստատած է, որ այդ թուղթերը ներածված են Ռուսահայաստանեն։ Նկատած է նաև այն իրողությունը, որ անոնք գործն են միևնույն արվեստագետին։

17 Նույն տեղում։